ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 հուլիսի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

96
(3305)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԻԼԻՈՆՆԵՐ ԵՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի հետաքննությունը վերհանել է մի ուշագրավ օրինաչափություն, որը կասկածի տակ է դնում Հայաստանում բիզնեսի եւ քաղաքականության տարանջատման սկզբունքը: Ուսումնասիրելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի տիկնոջ՝ Աննա Հակոբյանի ղեկավարած «Իմ քայլը» հիմնադրամի 2023-2026 թվականների նվիրատուների ցանկերը եւ դրանք համադրելով Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) կողմից հրապարակված խոշոր հարկատուների ցուցանիշների հետ, ակնհայտ է դառնում, որ իշխանական ընտանիքի հիմնադրամի ամենաառատաձեռն հովանավորները հենց երկրի խոշորագույն տնտեսվարողներն են, հատկապես՝ հանքարդյունաբերական հսկաները: Առաջին հերթին աչքի է զարնում հանքարդյունաբերության ոլորտի ներկայացուցիչների կենսական դերակատարումը հիմնադրամի բյուջեի համալրման գործում:

Հատկանշական է Հայաստանի երրորդ խոշոր հարկատուի՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի» (ԶՊՄԿ) դիրքավորումը, որը միայն 2026 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջե է վճարել 15.48 միլիարդ դրամ հարկ: ԶՊՄԿ-ի բարեգործական հիմնադրամը 2023-2024 թվականներին ընդհանուր առմամբ 70 միլիոն դրամի դրամաշնորհ է տրամադրել հիմնադրամի «Quanta» ծրագրին, իսկ 2025 թվականին եւս 20 միլիոն դրամ է փոխանցել «Իմ քայլը» հիմնադրամին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի վերաբերյալ դատարանի պարտադրանքով հարուցված քրեական վարույթով Հակակոռուպցիոն կոմիտեում էական առաջընթաց չկա: Չնայած վարույթի հարուցումից անցել է շուրջ յոթ ամիս, նախարարը մինչ օրս որեւէ դատավարական կարգավիճակ չունի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Վահե Հովհաննիսյանն ու նրա մերձավոր շրջապատի մի շարք անձինք հարցաքննվել են, սակայն դրանից հետո քննությունը փաստացի կանգ է առել. նոր գործընթացներ չեն իրականացվում, եւ այն, ըստ էության, մնացել է անորոշ վիճակում: Հիշեցնենք, որ դեռեւս 2025 թվականի դեկտեմբերի 4-ին «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի առերեւույթ կոռուպցիոն գործարքների վերաբերյալ Հակակոռուպցիոն կոմիտեն քրեական վարույթ է հարուցել բացառապես դատարանի պարտադրանքով: Վարույթի հիմքում փաստաբան Արա Ջոհրաբյանի՝ նախաձեռնող խմբի անունից 2024 թվականի դեկտեմբերի 4-ին Գլխավոր դատախազություն ներկայացրած հանցագործության մասին հաղորդումն էր: Սկզբնական փուլում իրավապահ մարմինները հրաժարվել էին վարույթ նախաձեռնել, սակայն փաստաբանը բողոքարկել էր այդ որոշումը, եւ դատարանը պարտավորեցրել էր հարուցել քրեական վարույթ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս շաբաթ նախատեսվում են քննարկումներ Արցախի Հանրապետության նախագահի եւ Ազգային Ժողովի նախագահի ընտրությունների վերաբերյալ: Քաղաքական շրջանակներում սպասվում է, որ առաջիկա հանդիպումների ընթացքում կհստակեցվի՝ կշարունակեն արդյոք գործել Արցախի պետական ինստիտուտները, թե կընտրվի այլ ճանապարհ: Արցախի նախագահի ընտրության հարցը, ըստ «Ժողովուրդ»-ի տեղեկությունների, քննարկվել է դեռեւս մինչեւ Հայաստանի համապետական ընտրությունները: Քննարկումների մասնակիցների միջեւ, ինչպես նշվում է, ձեւավորվել էր ընդհանուր մոտեցում, որ անհրաժեշտ է պահպանել Արցախի Հանրապետության նախագահի ինստիտուտը եւ կազմակերպել նախագահի ընտրություն: Միաժամանակ մտահոգություն է եղել, որ պետական ինստիտուտների գործունեության դադարեցման վտանգը շարունակում է իրական մնալ: Թեմայի շուրջ պարզաբանում ստանալու նպատակով «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է հասարակական-քաղաքական գործիչ Անաստաս Իսրայելյանի հետ: Նրա խոսքով՝ վերջին երեք ամիսների ընթացքում ինքը հանդիպումներ է ունեցել Արցախի խորհրդարանում ներկայացված տարբեր քաղաքական ուժերի եւ դաշինքների ներկայացուցիչների հետ: Իսրայելյանը նշում է, որ գործընթացները որոշակիորեն հետաձգվել են Հայաստանի ընտրությունների պատճառով, սակայն ընտրություններից հետո, իր գնահատմամբ, պատգամավորների եւ խմբակցությունների շրջանում նկատվում է զգալի պասիվություն:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը վերջին ճեպազրույցում բաց տեքստով հայտարարեց, որ դժգոհ է դատահիրավական համակարգի աշխատանքից՝ ընդգծելով, որ ոլորտում առկա խնդիրները շարունակում են մնալ օրակարգում: Այդ հայտարարությունից անմիջապես հետո իրավապահ համակարգում սկսվել են նոր գործընթացներ: «Ժողովուրդ» օրաթերթն ավելի վաղ տեղեկացրել էր, որ իշխանության ներսում քննարկվում են դատական համակարգում նոր կոշտ քայլեր, այդ թվում՝ դատավորների նկատմամբ քրեական վարույթների ակտիվացում, հնարավոր ձերբակալություններ եւ պաշտոնանկություններ: Այս ֆոնին ուշագրավ զարգացում է արձանագրվել: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Արթուր Նահապետյանը պաշտոնական գրությամբ դիմել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ բարձրացնելով helpcourt.am հարթակի գործունեության վերաբերյալ ինստիտուցիոնալ մտահոգություններ: Ի՞նչ կայքի մասին է խոսքը: HelpCourt.am-ը 2017 թվականից գործող դատական գնահատման հարթակ է՝ ստեղծված փաստաբան Լեւոն Սահակյանի կողմից, որտեղ փաստաբանները հրապարակայնորեն գնահատում եւ վարկանիշավորում են դատավորներին ու նրանց դատական ակտերը: Այսօրվա դրությամբ ամենաբարձր վարկանիշ ունեցող դատավորը, ըստ փաստաբանական համայնքի, Արման Հովհաննիսյանն է, իսկ ամենացածրը՝ ՍԴ դատավոր Սեդա Սաֆարյանը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԱՆԼՈՒԾԵԼԻ ԽՆԴԻՐՆԵՐ ՉԿԱՆ»

ArmLur.am-ը «Ժողովուրդի հարցերը» հաղորդման շրջանակներում բլից հարցեր է ուղղել ՀՀ տարածային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին:

- Ո՞րն է Ձեր ամենասիրելի քաղաքը Հայաստանում:

- Արմավիր:

- Ո՞րն է Ձեր սիրելի հայկական ուտեստը:

- Տոլմա:

- Գի՞րք, թե՞ ֆիլմ:

- Գիրք: Ֆիլմեր գրեթե չեմ դիտում: Հայտնի ֆիլմերից անգամ «Գլադիատորը» եւ «Տիտանիկը» մինչեւ վերջ չեմ նայել: Փոխարենը շատ գրքեր եմ կարդում:

- Եթե նախարար չլինեիք, ինչո՞վ կզբաղվեիք:

-Կշարունակեի քաղաքական գործունեությունս, հնարավոր է՝ լինեի Արմավիրի մարզպետ:

- Հայաստանը՝ մեկ բառով:

- Սեր:

- Ձեր սիրելի սպորտաձեւը:

- Ֆուտբոլ:

-Ո՞ր սոցիալական ցանցն եք ամենաշատն օգտագործում:

- Ֆեյսբուք:

- Հաջողությունը՝ մեկ բառով:

- Վաստակը:

- Առանց ո՞ր արժեքի չեք պատկերացնում աշխատանքը:

- Արդարություն:

- Ի՞նչ խորհուրդ կտաք երիտասարդներին:

- Լավ սովորեք:

- Եթե ՔՊ-ում չլինեիք, որտե՞ղ կաշխատեիք:

- Կվերադառնայի բանկային համակարգ:

- Ձեր պաշտոնավարման ընթացքում ո՞րն է եղել ամենամեծ սխալը:

-Վստահաբար բազմաթիվ սխալներ եմ արել, սակայն չեմ կարծում, որ եղել են անշտկելի կամ ճակատագրական սխալներ:

- Ո՞ր բարեփոխումներն եք ցանկանում դեռ իրականացնել:

- Ջրային ոլորտի, ընդերքօգտագործման, ճանապարհների որակի բարելավման եւ նախարարության համակարգման ոլորտներում բազմաթիվ բարեփոխումներ կան, որոնք նախատեսված են կառավարության հնգամյա ծրագրով:

- Ձեր ոլորտի ամենամեծ խնդիրը ո՞րն է:

- Խնդիրները շատ են, սակայն անլուծելի խնդիրներ չկան: Բոլոր ուղղություններով աշխատանք է տարվում:

- Ո՞ր քննադատությունն եք համարում արդար:

- Առողջ եւ հիմնավորված քննադատությունը: Այն կարող է լինել թե՛ ընդդիմությունից, թե՛ գործընկերներից, թե՛ ընտանիքի անդամներից:

-Կա՞ որոշում, որի համար հետո զղջացել եք:

- Որոշ կադրային որոշումների համար, որոնք ավելի վաղ են ընդունվել:

- Ինչո՞ւ ընդունեցիք նախարար դառնալու առաջարկը:

- Քաղաքական թիմը եւ վարչապետը այդպես նպատակահարմար համարեցին:

-Ձեր աշխատանքի ամենաբարդ օրը ո՞րն էր:

- Երբ առաջին անգամ նշանակվեցի քաղաքապետ: Նոր միջավայր էր, պետական համակարգում փորձ չունեի, իսկ երկու-երեք ամիս անց արդեն ընտրություններ էին սպասվում:

- Ո՞վ է Ձեր քաղաքական օրինակը:

- Հայաստանի Հանրապետության վարչապետը:

- Ինչպե՞ս եք արձագանքում քննադատությանը:

- Հանգիստ: Եթե քննադատությունը մասնագիտական եւ հիմնավորված է, ընդունում եմ: Եթե մանիպուլյատիվ է, լսում եմ եւ շարունակում աշխատանքս:

- Վերջին օրերին ինչպիսի՞ քննադատության եք հանդիպել:

-Կարդացել եմ պնդումներ Թուրքիայի էներգետիկայի նախարարի հետ հանդիպման վերաբերյալ, որոնք իրականությանը չեն համապատասխանում: Իրականում հանդիպումը եղել է Հայաստանի համար կարեւոր էներգետիկ ծրագրերի շուրջ:

- Ի՞նչ ծրագրեր եք քննարկել Թուրքիայի գործընկերոջ հետ:

- Հայաստանի եւ Թուրքիայի էներգետիկ համակարգերի կապման հնարավորությունը, որը տնտեսական հնարավորություններ կստեղծի եւ կուժեղացնի երկու երկրների էներգահամակարգերի կայունությունն ու ճկունությունը:

- Ինչպե՞ս եք հանգստանում աշխատանքից հետո:

- Հիմնականում աշխատանքային ծանրաբեռնվածություն ունեմ: Երբեմն ընկերներիս հետ ֆուտբոլ եմ խաղում, սակայն աշխատանքից ամենաշատը ինձ կտրում են ընտանիքս եւ երեխաներս: Փոքրիկիս ծնունդից հետո հենց նա է դարձել այն մարդը, ով ամբողջությամբ ինձ կտրում է աշխատանքից:

Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՐԱՆԸ ՄԵՂԱԴՐԵԼ Է

Իրանի ԱԳՆ խոսնակ Էսմայիլ Բաղային հայտարարել է, որ որեւէ քաղաքական կամ ռազմական պատճառաբանություն չի կարող արդարացնել ԱՄՆ-ի կողմից Իրանի քաղաքացիական ենթակառուցվածքների ոչնչացումը: Նրա խոսքով՝ ԱՄՆ հարվածների հետեւանքով վնասվել են քաղաքացիական օբյեկտներ, բժշկական կենտրոններ, կամուրջներ եւ մարդկանց կենսապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ:

Բաղային նշել է, որ ենթակառուցվածքների դեմ հարձակումը հարված է ոչ միայն շինություններին, այլեւ մարդկանց անվտանգությանը:

Իրանի ԱԳՆ ներկայացուցիչը նաեւ հայտնել է, որ Թեհրանը շարունակում է դիվանագիտական շփումները՝ լարվածությունը նվազեցնելու նպատակով: Նրա խոսքով՝ Իրանը ստացել է մի շարք միջնորդների առաջարկներ ԱՄՆ-ի հետ իրավիճակի կարգավորման վերաբերյալ, սակայն դրանց մանրամասները չի հրապարակում:

Միաժամանակ Բաղային քննադատել է ՄԱԳԱՏԷ-ի լռությունը՝ Իրանի միջուկային օբյեկտի վրա ԱՄՆ հարվածների վերաբերյալ՝ պահանջելով հստակ դիրքորոշում:

Նա նաեւ հայտարարել է, որ Իրանը չի խախտել որեւէ համաձայնություն առաջինը եւ պատասխան քայլերի է դիմել միայն այն բանից հետո, երբ ԱՄՆ-ը խախտել է իր պարտավորությունները:

Անդրադառնալով Խարք կղզու հնարավոր գրավման վերաբերյալ ԱՄՆ սպառնալիքներին՝ Բաղային զգուշացրել է, որ Վաշինգտոնը «կտեսնի դրա հետեւանքները»:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԵՏԱՔՈՏՄԱՆ ԱՌԱՐԿԱ Է ԴԱՐՁՐԵԼ

Փաստաբան Տաթեւիկ Սողոյանը գրում է. «Հիշո՞ւմ էիք, որ ասում էի «Սրբազան պայքարի» գործով դիմելու ենք միջազգային կառույցների: Հիշո՞ւմ էիք, որ ասում էի սա ՀՀ արդարադատության պատմության ամենախայտառակ գործն է ճանաչվելու: Խնդրեմ՝ 8 ամսվա անտրտունջ աշխատանքի առաջին արդյունքը. Հայաստանի դեմ երբեւէ հարուցված 19 հաղորդակցություններից ամենաամոթալին, ամենածանրը ու ամենածաղրականը մարդու իրավունքների եւ միջազգային իրավունքի նկատմամբ:

Թեեւ մեր դիմումում ցույց էինք տվել «Սրբազան պայքարի» մասնակիցների քաղաքական հետապնդման ժամանակագրությունը եւ ընդհանուր համատեքստը (ներառյալ հունիսի 12-ի բռնությունները), այդուհանդերձ շեշտադրել էինք առավելապես «18 արդարների» գործը, «ահաբեկչության» մեղադրանքի անհեթեթությունը: Այնուամենայնիվ, ՄԱԿ փորձագիտական խումբը հետազոտման առարկա է դարձրել ոչ միայն զուտ «18 արդարների» գործը, այլ ընդհանուր համատեքստը՝ պետական ապարատի ռեպրեսիաներից տուժած համարելով առնվազն 109 անձի: «Մենք մտահոգված ենք իշխանությունների ձեռնարկած միջոցներով, որոնք համահունչ չեն մարդու իրավունքների ՝ Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին»

Դե ինչ, սիրելի «ժողբաստիոնականներ», վայելեք ձեր բռնապետության ճանաչումը: Ամեն ինչ դեռ առջեւում է

Իսկ մեր պետության պատասխանները ՄԱԿ-ին միայն իսպանական ամոթ են առաջացնում»:

ՍՐՎՈՒՄ Է

Վերջին երկու օրերին ԱՄՆ-Իրան հակամարտությունն ավելի է սրվել: Այն առավել վտանգավոր փուլ է մտել՝ մեծացնելով տարածաշրջանային պատերազմի ընդլայնման եւ համաշխարհային էներգետիկ շուկաների վրա նոր ճնշումների ռիսկը: ԱՄՆ-ն շարունակել է ավիահարվածները Իրանի ռազմական ենթակառուցվածքների դեմ՝ թիրախավորելով հրթիռային պահեստներ, հակաօդային պաշտպանության համակարգեր եւ այլ ռազմական օբյեկտներ:

Իրանը հայտարարել է, որ պատասխան հարվածներ է հասցրել ԱՄՆ-ի ռազմական օբյեկտներին Հորդանանում, Քուվեյթում եւ Սիրիայում: Ամերիկյան կողմը, իր հերթին, հայտնել է զինծառայողների կորուստների մասին:

Լարված իրավիճակը պահպանվում է նաեւ Հորմուզի նեղուցում: Իրանական կողմի փոխանցմամբ՝ պայթյունների հետեւանքով վնասվել է երկու նավթատար, իսկ Թեհրանը կրկին նախազգուշացրել է, որ մինչեւ ԱՄՆ-ի գործողությունների դադարեցումը նավարկությունն անվտանգ չի լինելու:

Ռազմական գործողությունների ֆոնին աճել են նաեւ նավթի համաշխարհային գները: Brent տեսակի նավթի մեկ բարելի արժեքը գերազանցել է 90 դոլարը՝ պայմանավորված Հորմուզի նեղուցով նավթի մատակարարումների հնարավոր խափանման մտավախություններով:

Միաժամանակ դիվանագիտական ճակատում առաջընթաց չի արձանագրվել: Վաշինգտոնը հայտարարել է, որ պատրաստ է բանակցությունների միայն Իրանի դիրքորոշման փոփոխության դեպքում, մինչդեռ Թեհրանը պնդում է, որ շարունակելու է դիմադրությունը: Մի շարք արաբական երկրներ, այդ թվում՝ Արաբական Միացյալ Էմիրությունները, կոչ են արել անհապաղ քայլեր ձեռնարկել լարվածության նվազեցման ուղղությամբ:

Հիշեցնենք, որ Իրանի, ԱՄՆ-ի եւ Իսրայելի միջեւ հակամարտությունը սրվեց 2026 թվականի փետրվարի վերջին, երբ ԱՄՆ-ն եւ Իսրայելը համատեղ հարվածներ հասցրին Իրանի ռազմական եւ ռազմավարական նշանակության օբյեկտներին՝ հայտարարելով, որ նպատակ ունեն կանխել Իրանի ռազմական եւ միջուկային ծրագրերի հետագա զարգացումը:

Որոշ ժամանակ անց Իրանին հաջողեց ԱՄՆ-ին պարտավորեցնել կատարել իր 10 պահանջը, այդ թվում՝ ԱՄՆ զորքերի դուրս բերումը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՄԵԿՆՈՒՄ Է ԱՐՁԱԿՈՒՐԴ

ArmLur.am-ը ՀՀ կառավարության պաշտոնական կայքից տեղեկացավ, որ Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանին տրամադրվել է ամենամյա արձակուրդի մի մասը: ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի ստորագրած որոշման համաձայն՝ Դավիթ Առուշանյանին տրամադրվել է 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մի մասը՝ 5 աշխատանքային օր տեւողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 20-24-ը ներառյալ: Որոշմամբ սահմանվել է նաեւ, որ Դավիթ Առուշանյանի արձակուրդում գտնվելու ընթացքում նրան կփոխարինի ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանը:

Ա. Վ.

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՆՉ ԵՆ ՀԻՇԵՑՆՈՒՄ

Իրանի արտաքին գործերի նախարարությունը ԱՄՆ գործողությունները համեմատել է ահաբեկչության հետ:

«Իրանի քաղաքացիական ենթակառուցվածքների վրա Միացյալ Նահանգների հարձակումները եւ դրանց ոչնչացման հրապարակային ցուցադրումը հիշեցնում են ահաբեկչական խմբավորումների մեթոդները:

Մի կուսակցության համար, որը մի ժամանակ իրեն դիրքավորում էր որպես համաշխարհային կարգի, լիբերալիզմի եւ ահաբեկչության դեմ պայքարի դրոշակակիր, կամուրջների եւ քաղաքացիական ենթակառուցվածքների ոչնչացման պատկերների ցուցադրումը, կարծես, վերջին նվաճումն է, որով այն կարող է հպարտանալ»,-հայտարարել է Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարության խոսնակ Էսմայիլ Բաղային:

Բաղային ուշադրություն է հրավիրել ԱՄՆ պաշտպանության նախարարի գրառման վրա, որում նա հպարտություն էր հայտնում իրանական Չաբահար նավահանգստում ռազմածովային կառավարման աշտարակի ոչնչացման կապակցությամբ: Իրանի արտաքին գործերի նախարարության տվյալներով՝ ծովային անվտանգությունն ապահովող այս օբյեկտը վերջին օրերին երրորդ անգամ է հարվածի ենթարկվել ԱՄՆ-ի կողմից:

Բացի այդ, դիվանագետը հայտնել է, որ հարձակման են ենթարկվել Բունջի գյուղի (Ջասկի շրջան) տարածքում գտնվող էներգետիկ օբյեկտներն ու աղազրկման համալիրի պոմպակայանները, ինչպես նաեւ Մինաբի եւ Լամերդայի քաղաքացիական օբյեկտները:

ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ ՉԷ

Իրանի գերագույն առաջնորդն ուղերձով դիմել է ազգին: Մոջթաբա Խամենեին նշել է, որ ստորագրված համաձայնագրի կրկնակի խախտումը Միացյալ Նահանգների կողմից կրկին ապացուցեց աշխարհին, թե որքան անարժեք է ԱՄՆ նախագահի ստորագրությունը: Սա եւս մեկ անգամ հաստատեց, որ ամբարտավանությունը, գերիշխանության ձգտումը եւ դաժանությունն ամերիկյան քաղաքականության անբաժանելի մասն են:

Խամենեին նշել է նաեւ, որ այսօր գլխավոր խնդիրն է պահպանել ժողովրդի եւ պետության միջեւ միասնությունը, մի կողմ դնել քաղաքական տարաձայնությունները, վեճերը եւ կոնֆլիկտները, ինչպես նաեւ հրաժարվել սոցիալական տարբերությունների արհեստական ընդգծումից:

ԻՆՉ ՈՒՆԻ

Ո՞Վ Է ԱՆԱՀԻՏ ՇԻՐԻՆՅԱՆԸ

ArmLur.am-ը ուսումնասիրել է վարչապետի աշխատակազմի անվտանգության խորհրդի գրասենյակի ղեկավար Անահիտ Շիրինյանի՝ 2021-2025 թվականների գույքի, եկամուտների եւ դրամական միջոցների փոփոխությունը:

Անահիտ Շիրինյանը 2019 թվականի դեկտեմբերի 30-ից զբաղեցրել է ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականի պաշտոնը, իսկ 2023 թվականի մայիսի 18-ին նշանակվել է վարչապետի աշխատակազմի անվտանգության խորհրդի գրասենյակի ղեկավար:

Վերջին հինգ տարիների ընթացքում նրա հայտարարագրերում հիմնական փոփոխությունը վերաբերում է ֆինանսական միջոցներին: Եթե 2021 թվականին Շիրինյանը հայտարարագրել էր 6 մլն 509 հազար դրամ եկամուտ եւ 4.3 մլն դրամ դրամային հաշվի մնացորդ, ապա 2025 թվականին նրա տարեկան եկամուտը հասել է ավելի քան 16.8 մլն դրամի, իսկ բանկային ավանդը՝ 16 մլն դրամի: Միաժամանակ, ամբողջ ժամանակահատվածում նրա հիմնական անշարժ գույքը չի փոխվել. նա պահպանել է Երեւանի Կենտրոն վարչական շրջանում գտնվող երկու բնակարանների բաժնեմասերը, որոնք ձեռք են բերվել 2020 թվականին՝ ժառանգության միջոցով:

2021 թվական

2021 թվականի սկզբում եւ տարեվերջին Անահիտ Շիրինյանը ունեցել է Երեւանի Կենտրոն վարչական շրջանում գտնվող երկու բնակարանի բաժնային սեփականություն: Առաջին բնակարանի նկատմամբ նրա բաժինը կազմել է 1/4, իսկ երկրորդ բնակարանի նկատմամբ՝ 3/8: Երկու բնակարաններն էլ ձեռք են բերվել 2020 թվականի հուլիսի 24-ին՝ ժառանգության եղանակով:

2021 թվականին Շիրինյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են.

ԱՄՆ դոլար՝ տարվա սկզբում եւ վերջում՝ 690.9 դոլար,

ՀՀ դրամ՝ տարվա սկզբում՝ 4 մլն 380 հազար 484 դրամ, տարվա վերջում՝ 5 մլն 795 հազար 803 դրամ,

եվրո՝ տարվա սկզբում՝ 6 հազար 342 եվրո, տարվա վերջում՝ 6 հազար 338 եվրո,

բրիտանական ֆունտ՝ տարվա սկզբում՝ 1 հազար 550 ֆունտ, տարվա վերջում՝ 1 հազար 499 ֆունտ:

Բացի այդ, նա հայտարարագրել է 3 հազար 500 ԱՄՆ դոլար կանխիկ գումար, որը տարվա ընթացքում չի փոփոխվել:

2021 թվականին Անահիտ Շիրինյանի ընդհանուր հայտարարագրված եկամուտը կազմել է 6 մլն 509 հազար 498 դրամ:

2022 թվական

2022 թվականին Անահիտ Շիրինյանը պահպանել է Երեւանի Կենտրոնում գտնվող երկու բնակարանների բաժնային սեփականությունը:

Տարվա ընթացքում նա նոր անշարժ գույք չի ձեռք բերել եւ որեւէ գույք չի օտարել:

2022 թվականին նրա բանկային ավանդը տարվա սկզբում կազմել է 0 դրամ, իսկ տարեվերջին՝ 6 մլն դրամ:

Բանկային հաշիվների մնացորդները եղել են.

690.9 դոլար,

դրամ՝ տարվա սկզբում 5 մլն 795 հազար 803 դրամ, վերջում՝ 2 մլն 257 հազար 868 դրամ,

եվրո՝ 6 հազար 338 եվրո, վերջում՝ 6 հազար 333 եվրո,

ֆունտ ստեռլինգ՝ 1 հազար 499 ֆունտ, վերջում՝ 861 ֆունտ:

Կանխիկ միջոցների մասով նա կրկին հայտարարագրել է 3 հազար 500 ԱՄՆ դոլար: 2022 թվականին Անահիտ Շիրինյանի ընդհանուր եկամուտը կազմել է 6 մլն 918 հազար 737 դրամ:

2023 թվական

2023 թվականին նրա բանկային ավանդը տարվա սկզբի 6 մլն դրամից աճել է մինչեւ 10.5 մլն դրամ:

Բանկային հաշիվներում առկա են եղել.

690.9 դոլար,

դրամային հաշվում՝ տարվա սկզբում 2 մլն 257 հազար 868 դրամ, վերջում՝ 3 մլն 332 հազար 775 դրամ,

եվրոյով՝ 6 հազար 333 եվրո, վերջում՝ 6 հազար 328 եվրո,

ֆունտ ստեռլինգով՝ 861 ֆունտ, վերջում՝ 744 ֆունտ:

Կանխիկ գումարը կազմել է 3 հազար 500 դոլար:2023 թվականին նրա ընդհանուր եկամուտը կազմել է 10 մլն 843 հազար 857 դրամ:

2024 թվական

2024 թվականի սկզբում նրա բանկային ավանդը կազմել է 10 մլն 500 հազար դրամ, իսկ տարվա վերջում՝ 16 մլն դրամ:

Բանկային հաշիվներում առկա են եղել.

690.9 դոլար,

դրամ՝ տարվա սկզբում 3 մլն 332 հազար 775 դրամ, վերջում՝ 4 մլն 738 հազար 840 դրամ,

եվրո՝ 6 հազար 328 եվրո, վերջում՝ 6 հազար 327 եվրո,

ֆունտ՝ 744 ֆունտ, վերջում՝ 613 ֆունտ:

Կանխիկ գումարը կազմել է 3 հազար 500 դոլար:

2024 թվականին Անահիտ Շիրինյանի ընդհանուր եկամուտը կազմել է 13 մլն 13 հազար 802.7 դրամ:

2025 թվական

2025 թվականի սկզբում եւ վերջում Անահիտ Շիրինյանի բանկային ավանդը կազմել է 16 մլն դրամ:

Բանկային հաշիվների մնացորդները եղել են.

դոլար՝ 690.9 դոլար,

դրամ՝ տարվա սկզբում4 մլն 738 հազար 840 դրամ, վերջում՝ 12 մլն 664 հազար 24.7 դրամ,

եվրո՝ տարվա սկզբում 6 հազար 327 եվրո, վերջում՝ 6 հազար 321.72 եվրո,

ֆունտ՝ տարվա սկզբում 613 ֆունտ, վերջում՝ 499.57 ֆունտ:

Կանխիկ միջոցները կազմել են 3 հազար 500 ԱՄՆ դոլար:

2025 թվականին Անահիտ Շիրինյանի ընդհանուր հայտարարագրված եկամուտը կազմել է 16 մլն 840 հազար 774 դրամ:

Դրանից՝

15 մլն 611 հազար 699 դրամը՝ աշխատանքի վարձատրություն եւ դրան հավասարեցված վճարումներ՝ Վարչապետի աշխատակազմից,

1 մլն 229 հազար 75 դրամը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ից ստացված տոկոսներ եւ այլ հատուցումներ:

Այսպիսով, 2021-202թթ. Անահիտ Շիրինյանի հայտարարագրերում հիմնական ակտիվը մնացել են Երեւանի կենտրոնում գտնվող երկու բնակարանների բաժնեմասերը: Այդ ժամանակահատվածում նրա ֆինանսական միջոցներն ու եկամուտները զգալիորեն աճել են. 2021թ. 6.5 մլն դրամ եկամտից 2025թ. հասնելով ավելի քան 16.8 մլն դրամի, իսկ բանկային ավանդը՝ 16 մլն դրամի:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎՆԱՍՎԵԼ Է ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՇԵՆՔԸ

Ռուսական հրթիռային հարձակման հետեւանքով վնասվել է Կիեւում գտնվող Ադրբեջանի դեսպանատան շենքը, հայտնում են ադրբեջանական ԶԼՄ-ները: Ավելի վաղ հայտնել էինք, որ ՌԴ զինված ուժերը գիշերը Կիեւի վրա իրականացրել են զանգվածային հարձակում՝ 40 րոպեում կիրառելով 31 բալիստիկ հրթիռ եւ 12 «Ցիրկոն» գերձայնային հրթիռ: Կա 1 զոհ, 13 տուժած: Վնասվել են բնակելի շենքեր, «Լուկյանիվսկա» մետրոյի կայարանը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՈՐԾԱՆԻՉՆԵՐ

Միացյալ Նահանգները որոշել է Եվրոպայից Մերձավոր Արեւելք վերաբաշխել լրացուցիչ F-16 եւ F-35 կործանիչներ, հաղորդում է The New York Times-ը (NYT): ԱՄՆ պաշտոնյաների շրջանում իր աղբյուրների համաձայն՝ «Գերմանիայի ռազմաօդային ուժերի F-16 կործանիչներ եւ Մեծ Բրիտանիայի F-35 գաղտնի կործանիչներ են տեղակայվել Մերձավոր Արեւելքում»: Հրատարակությունը պարզաբանում է, որ տարածաշրջան են տեղակայվել նաեւ «լրացուցիչ տանկեր»: Հրատարակությունը նշում է, որ այս քայլերը «եւս մեկ նշան են այն բանի, որ Թրամփի վարչակազմը կարող է շուտով սրել Իրանի դեմ հարվածները»: Հրատարակության համաձայն՝ «դեռեւս պարզ չէ, թե որտեղ կտեղակայվեն այս լրացուցիչ մարտական ինքնաթիռները»: Ակնկալվում է, որ որոշ ամերիկյան տանկեր կուղարկվեն Իսրայելի ավիաբազաներ:

ՀԻՇԵՑՈՒՄ

ՈՒՇԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ԵՆ ՍՊԱՍՎՈՒՄ

Հարկերի եւ այլ պարտադիր վճարների ժամանակին եւ ամբողջական վճարումը հանրային ծառայությունների անխափան աղահովման, պետական եւ համայնքային ծրագրերի իրականացման, ինչպես նաեւ արդար մրցակցային միջավայրի ձեւավորման կարեւոր նախադայմաններից է: Այս համատեքստում Պետական եկամուտների կոմիտեն, կարեւորելով հարկ վճարելու մշակույթի ձեւավորումն ու հարկային կարգապահության բարձրացումը, հարկ վճարողներին հիշեցնում է հարկման տարբեր ռեժիմներում գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվարկների եւ հաշվետվությունների ներկայացման ժամկետների մասին:

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ

Միկրոձեռնարկատիրության հարկման համակարգում գործունեություն իրականացնող տարբեր սուբյեկտների համար սահմանված են հարկային հաշվարկներ եւ հաշվետվություններ ներկայացնելու տարբեր ժամկետներ: Այսպես,

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ

Եթե ֆիզիկական անձը ցանկանում է գործել միկրոձեռնարկատիրության հարկման համակարգում, ապա նախքան գործունեություն սկսելը կամ շարունակելը, հարկային մարմին պետք է ներկայացնի միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն: նդ որում, հայտարարությունը կարող է ներկայացնել հարկային տարվա ընթացքում ընտրված ցանկացած ամսվա, մի քանի ամիսների կամ ամբողջ հարկային տարվա համար:

Միկրոձեռնարկատիրության շրջանակում թույլատրելի գործունեության տեսակներին կարող եք ծանոթանալ այստեղ՝ https://arlis.am/hy/acts/226556/latest

Անհատ ձեռնարկատեր եւ ռեզիդենտ առեւտրային կազմակերպություն

Միկրոձեռնարկատիրության համակարգում որպես անհատ ձեռնարկատեր կամ կազմակերպություն գործող տնտեսվարող սուբյեկտները ներկայացնում են երկու տեսակի հարկային հաշվարկներ.

Տարեկան հաշվետվություն

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերերը եւ ռեզիդենտ առեւտրային կազմակերպությունները մինչեւ հարկային տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը ներառյալ, պետք է հարկային մարմին ներկայացնեն հաշվետվություն՝ նախորդ հարկային տարվա ընթացքում իրականացված գործունեության բոլոր տեսակների իրացման շրջանառության վերաբերյալ:

Եկամտային հարկի եւ սոցիալական վճարի հաշվարկ

Եթե միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերերը կամ կազմակերպությունները, որպես հարկային գործակալ, հաշվարկել եւ վճարել են աշխատավարձ կամ ֆիզիկական անձանց վճարված այլ եկամուտ, ապա մինչեւ յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, հարկային մարմին պետք է ներկայացնեն եկամտային հարկի եւ սոցիալական վճարի հաշվարկ:

Շրջանառության հարկ վճարողներ

Շրջանառության հարկ վճարողների համար հարկային հաշվարկների ներկայացման ժամկետները հետեւյալն են.

1. Շրջանառության հարկի հաշվարկ

Շրջանառության հարկ վճարող ռեզիդենտ առեւտրային կազմակերպությունները եւ անհատ ձեռնարկատերերը մինչեւ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում շրջանառության հարկի հաշվարկ:

2. Եկամտային հարկի եւ սոցիալական վճարի հաշվարկ

Եթե շրջանառության հարկ վճարող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը, որպես հարկային գործակալ, հաշվարկել եւ վճարել են աշխատավարձ կամ ֆիզիկական անձանց վճարված այլ եկամուտ, ապա մինչեւ յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին պետք է ներկայացնի եկամտային հարկի եւ սոցիալական վճարի հաշվարկ:

3. Շահութահարկի հաշվարկ

Շրջանառության հարկ վճարող անհատ ձեռնարկատերերը մինչեւ հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում նաեւ շահութահարկի հաշվարկ:

4. Սոցիալական վճարի տարեկան հաշվարկ

1974 թվականի հունվարի 1-ին եւ դրանից հետո ծնված շրջանառության հարկ վճարող անհատ ձեռնարկատերերը մինչեւ հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում անհատ ձեռնարկատիրոջ եւ նոտարի սոցիալական վճարի տարեկան հաշվարկ:

Ավելացված արժեքի հարկ վճարողներ

Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) վճարողները հարկային մարմին ներկայացնում են չորս տեսակի հարկային հաշվարկներ, որոնց ներկայացման ժամկետները հետեւյալն են.

1. ԱԱՀ-ի եւ ակցիզային հարկի միասնական հաշվարկ

ԱԱՀ վճարող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը եւ նոտարները մինչեւ յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ-ի եւ ակցիզային հարկի միասնական հաշվարկ:

2. Եկամտային հարկի եւ սոցիալական վճարի հաշվարկ

Եթե ԱԱՀ վճարող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերը կամ նոտարները, որպես հարկային գործակալ, հաշվարկել եւ վճարել են աշխատավարձ կամ ֆիզիկական անձանց վճարված այլ եկամուտ, ապա մինչեւ յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, հարկային մարմին պետք է ներկայացնեն եկամտային հարկի եւ սոցիալական վճարի հաշվարկ:

3. Շահութահարկի հաշվարկ

ԱԱՀ վճարող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը եւ նոտարները մինչեւ հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում շահութահարկի հաշվարկ:

4. Սոցիալական վճարի տարեկան հաշվարկ

1974 թվականի հունվարի 1-ին եւ դրանից հետո ծնված ԱԱՀ վճարող անհատ ձեռնարկատերերը եւ նոտարները մինչեւ հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացնում սոցիալական վճարի տարեկան հաշվարկ:

Այլ գործարքներ

Միաժամանակ, անկախ հարկման ռեժիմից՝ եթե իրականացվել են նշված գործարքները, ապա անհրաժեշտ է ներկայացնել նաեւ հետեւյալ հաշվարկները եւ (կամ) տեղեկությունները.

ԵԱՏՄ երկրներից ապրանքների ներմուծման դեպքում՝ մինչեւ հաջորդ ամսվա 20-ը պետք է ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր եւ ապրանքների ներմուծման եւ անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին հայտարարություն,

ԵԱՏՄ երկրներ ապրանքների արտահանման դեպքում՝ արտահանման օրվանից 180 օրացուցային օրվա ընթացքում պետք է ներկայացնել արտահանման հարկային հայտարարագիր,

եթե միկրոձեռնարկատիրության սուբյեկտի կամ շրջանառության հարկ վճարողի կողմից դուրս գրված հարկային հաշվում առանձնացվել է ԱԱՀ, ապա պետք է ներկայացնել նաեւ ԱԱՀ-ի եւ ակցիզային հարկի միասնական հաշվարկ,

ակցիզային հարկ վճարող լինելու դեպքում՝ մինչեւ հաջորդ ամսվա 20-ը պետք է ներկայացնել ԱԱՀ-ի եւ ակցիզային հարկի միասնական հաշվարկ,

բնապահպանական հարկի կամ բնօգտագործման վճարների առաջացման դեպքում պետք է մինչեւ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներկայացնել համապատասխան միասնական հարկային հաշվարկ:

ՀՀ կառավարության 06.07.2017թ. N 802-Ն որոշմամբ սահմանված N2 եւ N3 հավելվածների ցանկերում (ցանկերին կարող եք ծանոթանալ այստեղ՝https://arlis.am/hy/acts/177260/latest) ներառված ապրանքների, այդ թվում՝ օգտակար հանածոների եւ դրանց արտադրատեսակների արտադրողները եւ ներմուծող-իրացնողները պետք է մինչեւ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ ներկայացնեն ապրանքների, այդ թվում՝ օգտակար հանածոների եւ դրանց արտադրատեսակների արտադրության եւ շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ հաշվետվություն:

Ֆիզիկական անձանց պասիվ եկամուտներ, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց եկամուտներ վճարելու դեպքում հարկային գործակալները պետք է մինչեւ յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա մարտի 1-ը հարկային մարմին ներկայացնեն այդ անձանց եկամուտների, դրանցից հաշվարկված եւ պահված եկամտային հարկի վերաբերյալ անհատական տեղեկություններ, բացառությամբ՝ բանկային կամ ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների:

Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին եկամուտ վճարված լինելու դեպքում շրջանառության հարկ եւ (կամ) ԱԱՀ վճարող հարկային գործակալները պետք է մինչեւ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնեն նախորդ հաշվետու եռամսյակում ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված եւ պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկ:

Պետական եկամուտների կոմիտեն հարկ վճարողներին հորդորում է հարկային հաշվարկներն ու հաշվետվությունները ներկայացնել օրենքով սահմանված ժամկետներում եւ ժամանակին կատարել հարկային պարտավորությունները՝ խուսափելով տույժերի, տուգանքների եւ այլ իրավական հետեւանքներից:

Հարկային պարտավորությունների բարեխիղճ եւ ժամանակին կատարումը նպաստում է հարկ վճարելու մշակույթի ամրապնդմանը, հավասար մրցակցային պայմանների ապահովմանը, ստվերային տնտեսության կրճատմանը եւ սոցիալական ծրագրերի արդյունավետ իրագործմանը:

ՈՎ Է ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾԸ

ArmLur.am-ին հայտնի է դարձել Էրեբունիում կրակոցների գործով ձերբակալվածի ինքնությունը: Վերջինս Արմեն Օհանյանն է: Ավելին, ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ կրակոցների հետեւանքով վիրավորված 15-ամյա Գ. Մարգարյանը եւս միջադեպի հետ կապ ունի եւ նրա վիրավորումը պատահականության հետեւանք չէ: Հուլիսի 18-ին հայտնել էինք, որ կրակոցներ են հնչել Էրեբունի վարչական շրջանում: Տեղեկությունների համաձայն՝ Երեւանում հնչած 30-ից ավելի կրակոցների եւ մեկ անձի սպանության դեպքի վայրում ուշագրավ իրավիճակ էր եղել: Սակրավորների խումբ էր շտապել դեպքի վայր, քանի որ դեպքի վայրում հայտնաբերվել էր նռնակ, որը, բարեբախտաբար, չէր պայթել: Shamshyan.com-ը հայտնել էր, որ հուլիսի 18-ին մարտաֆիլմ հիշեցնող կրակոցներ էին տեղի ունեցել Երեւանում: Ժամը 21:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում եւ նույն գլխավոր վարչության Երեւանի քրեական վարչությունում միաժամանակ օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Մուրացան 109 հասցեում միջադեպ է տեղի ունեցել, որի ժամանակ հնչել են կրակոցներ, եւ կա զոհ: Դեպքի մասին պաշտոնական հաղորդագրություն տարածեց Քննչական կոմիտեն՝ հայտնելով, որ սպանության, սպանության փորձի, հրազենի ապօրինի շրջանառության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում 1 անձ ձերբակալվել է:

Ք. Մ.

● *Հուլիսի 13-ից 19-ը ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնում գրանցվել է 825 դեպք, որից 327-ը՝ արտակարգ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ Է ՄԱՄՆԱԿՑԵԼ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը հուլիսի 17-ին հրապարակել է սույն վերնագրով տեղեկատվություն. «Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանն այսօր մասնակցել է Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի գլխավորությամբ անցկացված աշխատանքային խորհրդակցությանը»: Այդ նյութում ներկայացված են Տավուշի մարզպետարանում հուլիսի 17-ի խորհրդակցության մանրամասներ. «Այսօր Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի գլխավորությամբ անցկացվել է աշխատանքային խորհրդակցություն, որին մասնակցել են Փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության եւ էկոպարեկային ծառայության Տավուշի մարզային վարչության ներկայացուցիչները: Խորհրդակցությանը ներկա են եղել նաեւ Տավուշի մարզպետի տեղակալ Արթուր Հովակիմյանը, մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարը, համայնքների ղեկավարները, ՆԳՆ ոստիկանության մարզային ստորաբաժանումների ներկայացուցիչները եւ ոլորտային պատասխանատուները: Խորհրդակցության ընթացքում քննարկվել են անտառային եւ խոտածածկ տարածքներում հրդեհների կանխարգելման, ապօրինի ծառահատումների դեմ պայքարի, ինչպես նաեւ բնական աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացմանն առնչվող հարցեր: Կարեւորվել է պատասխանատու գերատեսչությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ արդյունավետ համագործակցության ապահովումը, կանխարգելիչ աշխատանքների շարունակական իրականացումը եւ առկա ռիսկերի նվազեցման նպատակով գործողությունների համակարգված կազմակերպումը»: Մինչ հուլիսի 17-ին Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավարը Տավուշի մարզպետարանում անտառային եւ խոտածածկ տարածքներում հրդեհների կանխարգելման վերաբերյալ խորհրդակցության էր մասնակցում, այդ նույն ժամանակ մի քանի օր այրվում էր Դիլիջան համայնքի աղբավայրը: Այդ հրդեհի հետեւանքով ծուխը, ծանր հոտը հուլիսի 17-ին տարածվել էին միջպետական ավտոճանապարհին, Աղստեւ գետի հովտում: Դիլիջան համայնքի աղբավայրում հրդեհներ հաճախ են լինում: Դիլիջանի համայնքապետը միջոցներ չի ձեռնարկում աղբավայրը ցանկապատելու, հրդեհները կանխելու համար: Էկոպարեկային ծառայությունը, բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը պարտավոր են Դիլիջանի աղբավայրի հրդեհների կապակցությամբ միջոցներ ձեռնարկել: Համայնքապետը նաեւ չի պահպանում հակահրդեհային կանոնները: 2025թ. նոյեմբերի վերջին Դիլիջանի «Կազաչի» կոչվող հանդամասում եւ հարակից անտառային գոտիներում խոշոր հրդեհ էր բռնկվել: Դավիթ Սարգսյանը գիշերը գտնվել է հրդեհաշիջման վայրում եւ ուղիղ տեսանյութով ծխախոտը ձեռքին հրդեհի վայրից մանրամասներ է ներկայացրել իրավիճակի մասին: Դա համացանցում մեծ քննարկումների եւ քննադատությունների առիթ դարձավ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏՎՅԱԼՆԵՐ

ՉԻՆԱՍՏԱՆԸ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ Է ՈՒՆԵՑԵԼ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հուլիսի 16-ին հեռուստատեսային հատուկ ելույթում հայտարարել է, որ երկրի ընտրական համակարգը տարիներ շարունակ եղել է «խոցելի», իսկ ամերիկացիներից թաքցվել են դրա վերաբերյալ կարեւոր տեղեկություններ: Սակայն ընտրական հարցերով փորձագետներն ու Դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչները նշել են, որ նախագահը չի ներկայացրել որեւէ համոզիչ աղացույց, որը կհաստատի իր պնդումները:

Թրամփը հայտարարել է, թե Չինաստանը 2020 թվականի ընտրական շրջանից սկսած ապօրինի ճանապարհով ձեռք է բերել շուրջ 220 միլիոն ամերիկացի ընտրողների տվյալներ, այդ թվում՝ անուններ, հասցեներ եւ կուսակցական նախասիրություններ: Նրա խոսքով՝ տվյալները վերաբերում են 18 նահանգների տասնյակ միլիոնավոր ընտրողների:

Չինաստանի դեսպանության ներկայացուցիչը հերքել է մեղադրանքները՝ հայտարարելով, որ Պեկինը «երբեք չի միջամտել եւ չի միջամտի ԱՄՆ նախագահական ընտրություններին»:

Միաժամանակ, փորձագետները հիշեցրել են, որ ԱՄՆ-ում ընտրողների գրանցման տվյալների զգալի մասը հրապարակային է, իսկ որոշ նահանգներ դրանք նույնիսկ վաճառքի են հանում: Սպիտակ տան գաղտնազերծած փաստաթղթերում նույնպես նշվում է, որ Չինաստանի կողմից օգտագործված տվյալների մի մասը հանրությանը հասանելի տեղեկատվություն է եղել:

Ելույթի ընթացքում Թրամփը կրկին խոսել է այսպես կոչված «խորը պետության» (deep state) մասին՝ պնդելով, թե նախկին նախագահներ Բարաք Օբամայի եւ Ջո Բայդենի վարչակազմերում աշխատող պաշտոնյաները փորձել են թաքցնել Չինաստանի հնարավոր ազդեցությունը 2020 թվականի ընտրությունների վրա:

Նա հայտարարել է, որ իրավապահ մարմիններին հանձնարարել է պաշտոնանկ անել այն անձանց, որոնք, իր խոսքով, ներգրավված են եղել «կոծկման» մեջ, եւ անհրաժեշտության դեպքում նրանց նկատմամբ քրեական հետապնդում սկսել:

Թրամփը նաեւ պնդել է, որ ամերիկացիներին տարիներ շարունակ մոլորեցրել են ընտրական ենթակառուցվածքների անվտանգության հարցում՝ նշելով, որ քվեարկության մեքենաներն ու ձայների հաշվարկման համակարգերը «խոցելի են»:

Սակայն ընտրական անվտանգության մասնագետները նշել են, որ ԱՄՆ ընտրական համակարգի հնարավոր տեխնիկական ռիսկերը վաղուց հայտնի են, իսկ ընտրությունների ապակենտրոնացված կազմակերպումը՝ նահանգային եւ տեղական մակարդակներում, լայնածավալ կեղծիքների իրականացումը դարձնում է չափազանց դժվար:

Դեմոկրատները քննադատել են նախագահի ելույթը՝ այն գնահատելով որպես ընտրողների վստահությունը թուլացնելու փորձ՝ նոյեմբերին կայանալիք միջանկյալ ընտրություններից ընդամենը մի քանի ամիս առաջ:

Ելույթի ավարտին ԱՄՆ նախագահը կրկին կոչ է արել ընդունել SAVE America Act օրինագիծը, որը նախատեսում է խստացնել ընտրողների ինքնության եւ քաղաքացիության հաստատման պահանջները: Իրավապաշտպան կազմակերպությունները, սակայն, զգուշացնում են, որ այդ փոփոխությունները կարող են դժվարացնել որոշ ամերիկացիների մասնակցությունը ընտրություններին:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ Է 2288 ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Կանխարգելում, հայտնաբերում, բացահայտում: Երեք հիմնական ուղղություն, որոնք ուղենշում են Պարեկային ծառայության շուրջօրյա աշխատանքը՝ ընդգրկելով ոչ միայն վարչական իրավախախտումներին օպերատիվ արձագանքը, այլ նաեւ հանցագործությունների դեմ պայքարը:

2026 թվականի առաջին կիսամյակում պարեկային ծառայողները բացահայտել են 2288 հանցագործության դեպք:

Ձեռնարկված արդյունավետ միջոցառումների արդյունքում ավելացել են թե՛ թմրամիջոցների շրջանառության, թե՛ ապօրինի պահվող զենք-զինամթերքի հայտնաբերման դեպքերը: Թմրամիջոցների հայտնաբերման ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 80 դեպքով՝ հասնելով 1300-ի, իսկ զենք-զինամթերքի հայտնաբերմանը՝ 35 դեպքով՝ կազմելով 132 դեպք:

19,9 տոկոսով աճել են սառը զենքի հայտնաբերման դեպքերը:

Պարեկային ծառայողների կողմից բնակչության շրջանում բացատրական աշխատանքի շնորհիվ աճել են ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնելու դեպքերը:

Հետեւողականորեն իրականացվող միջոցառումների արդյունքում բացահայտվել են ֆիզիկական ներգործության, խուլիգանության, գողության, մարմնական վնասվածք պատճառելու, տրանսպորտային միջոցների առեւանգման, ապօրինի ծառահատման դեպքեր:

Ուշագրավ է նաեւ կեղծ փաստաթղթերի հայտնաբերման ցուցանիշը: Եթե նախորդ տարվա առաջին կիսամյակում արձանագրվել է 60 դեպք, այս տարի այն 301 է. 300-ը վարորդական իրավունքի կեղծ վկայականի հայտնաբերման դեպք են:

Հետախուզվող անձանց հայտնաբերման ուղղությամբ պարեկային ծառայողների իրականացրած միջոցառումների արդյունքում հայտնաբերվել է 90 հետախուզվող անձ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 51-ի դիմաց:

Արձանագրված դրական ցուցանիշները միայն թվեր չեն: Դրանց հետեւում պարեկային ծառայողների շուրջօրյա աշխատանքն է՝ յուրաքանչյուր ահազանգին արագ արձագանքելու, իրավախախտումների եւ հանցագործությունների դեմ հետեւողական պայքարի եւ, որ ամենակարեւորն է, հանրային անվտանգության ապահովման պատասխանատվությունը:

ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է

Արարատի մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության լիազորության շրջանակում, ուսումնասիրել է Արարատի քաղաքային զբոսայգու տարածքում գտնվող հողամասերը տարբեր անձանց տրամադրելու վերաբերյալ փաստաթղթերը:

Ուսումնասիրության արդյունքում, ի թիվս այլնի, պարզվել է, որ Արարատ համայնքի նախկին ղեկավար Ա.Բ.-ն, խախտելով իրավահարաբերության ծագման պահին գործող Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, Արարատ քաղաքի Այգի 10 հասցեում գտնվող՝ 630 քմ մակերեսով հողամասը 2008 թվականի փետրվարի 12-ին կառուցապատման իրավունքով՝ 99 տարի ժամկետով, հատկացրել է ֆիզիկական անձի:

Դատախազի կողմից միջնորդագիր է հասցեագրվել Արարատ համայնքի ղեկավարին՝ Արարատ համայնքի եւ կառուցապատողի միջեւ 2008 թվականի փետրվարի 12-ին կնքված կառուցապատման իրավունքը դադարեցնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Միջնորդագրի հիման վրա, Արարատի համայնքապետարանի իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում, 2026 թվականի հուլիսի 17-ին Կադաստրի կոմիտեում դադարեցվել է Արարատ քաղաքի Այգի 10 հասցեում գտնվող՝ 630 քմ մակերեսով, 1 միլիոն 182 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ գրանցված կառուցապատման իրավունքը:

Հիշեցնենք, որ 2026 թվականի հունիսի 18-ին դատախազական ներգործության արդյունքում, Կադաստրի կոմիտեում դադարեցվել էր Արարատի քաղաքային զբոսայգու տարածքում՝ Շահումյան 36/5 հասցեում գտնվող՝ 0,1280 հա մակերեսով, 2 միլիոն 403 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ գրանցված կառուցապատման իրավունքը, 2026 թվականի հունիսի 29-ին՝ դադարեցվել էր Արարատ քաղաքի Այգի 1/1 հասցեում գտնվող՝ 0.0591 հա մակերեսով, 1 միլիոն 109 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ գրանցված կառուցապատման իրավունքը, իսկ 2026 թվականի հուլիսի 8-ին դադարեցվել էր Արարատ քաղաքի Այգի 6 հասցեում գտնվող՝ 0.2100 հա մակերեսով, 3 միլիոն 943 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ գրանցված կառուցապատման իրավունքը:

Մյուս պայմանագրերի լուծման ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են:

● *Նախորդ շաբաթվա ընթացքում տուժել է 155, զոհվել՝ 18 մարդ: Փրկարարական գործողությունների արդյունքում փրկվել է 13 մարդ:*

ՎԱՏԱՀԵԼԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

Շուրջ երեք տասնամյակ՝ նույն հասցեում: Սկզբում՝ ընդամենը մեկ ստոմատոլոգիական կլինիկա, իսկ այսօր՝ ժամանակակից բազմապրոֆիլ բժշկական կենտրոն: «Դաշտոյան Մեդիքլ Գրուպ»-ի գրեթե 30 տարվա ճանապարհը լի է զարգացման, նորարարության եւ շարունակական առաջընթացի պատմություններով:

Այս տարիների ընթացքում «Դաշտոյան Մեդիքլ Գրուպ»-ում պահպանել են ամենակարեւորը՝ պրոֆեսիոնալ մոտեցումը, իսկ հնարավորություններն ու ծառայությունների շրջանակը շարունակաբար ընդլայնվել են: Այսօր բժշկական կենտրոնում գործում են ստոմատոլոգիայի, պլաստիկ եւ դիմածնոտային վիրաբուժության, բժշկական կոսմետոլոգիայի բաժանմունքները, թվային ատամնատեխնիկական լաբորատորիան, ինչպես նաեւ միջազգային բարձր չափանիշներին համապատասխան ախտորոշիչ ծառայություններ: Վերջին սերնդի գերժամանակակից սարքավորումներով այստեղ իրականացվում են նաեւ ուլտրաձայնային եւ ռենտգեն հետազոտություններ: Բժշկական կենտրոնը շարունակում է զարգանալ՝ ներդնելով նոր տեխնոլոգիաներ եւ ընդլայնելով մատուցվող ծառայությունները:

Այսպիսի զարգացումը, բնականաբար, պահանջում էր նաեւ զգալի ներդրումներ: Նոր հիվանդանոցային մասնաշենքը պետք էր համալրել ժամանակակից բժշկական սարքավորումներով եւ անհրաժեշտ ենթակառուցվածքով: Հենց այս փուլում էլ սկսվեց համագործակցությունը Կոնվերս Բանկի հետ:

Converse SME բիզնես ֆինանսավորման շրջանակում իրականացված ֆինանսավորման շնորհիվ բժշկական կենտրոնը համալրվեց նոր վիրահատարանով, գերժամանակակից վիրահատական սեղաններով, լուսային համակարգով, բժշկական կահավորմամբ եւ նորագույն սարքավորումներով:

Բժշկական կենտրոնի հիմնադրի խոսքով՝ հուսալի ֆինանսական գործընկեր ունենալը նման մասշտաբային զարգացման ծրագրերն իրականացնելու կարեւոր նախապայմաններից է, իսկ վստահելի համագործակցությունն օգնում է ավելի արագ կյանքի կոչել ներդրումային ծրագրերը:

Ֆինանսավորումն իրականացվել է Converse SME եւ Converse Leasing պրոդուկտների շրջանակում:

Conversebank.am, 010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Լիանա Հարությունի Հարությունյանի՝ Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարանի կողմից 2013 թվականին տրված «Ստոմատոլոգիա» մասնագիտության AB 179917 համարի դիպլոմը (գրանցման համար՝ 378): Համարել անվավեր:

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ

Գ

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ Է

Կոնվերս Բանկը Euromoney հեղինակավոր միջազգային կազմակերպության կողմից արժանացել է Armenia's Best Digital Bank for Consumers մրցանակին՝ լավագույնը ճանաչվելով հուլիսի 16-ին Լոնդոնում կայացած մրցանակաբաշխության առանցքային անվանակարգերից մեկում:

Մրցանակաբաշխությանը մասնակցել եւ մրցանակը ստացել է Կոնվերս Բանկի գլխավոր գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Հրանտ Հակոբյանը:

Նա նշել է. «Հեղինակավոր Euromoney-ի մրցանակը եւ Կոնվերս Բանկի գործունեության բարձր գնահատականը մեր թիմի հետեւողական աշխատանքի արդյունքն է: Կոնվերս Բանկի թվայնացման ռազմավարության առանցքում ոչ թե տեխնոլոգիաներն են, այլ մարդը՝ հաճախորդը: Մենք հետեւողականորեն վերափոխում ենք թե հաճախորդների ֆինանսական փորձառությունը, թե Բանկի ներքին գործընթացները՝ ստեղծելով իրական արժեք ներկայացնող թվային լուծումներ, ծառայությունները դարձնելով ավելի անհատականացված, արագ, պարզ եւ անվտանգ»:

Կոնվերս Բանկը մրցանակին արժանացել է բանկային ծառայությունների թվայնացման եւ դրանց մատուցման փորձառության ոլորտում գրանցած հաջողությունների համար: Թվային փոխակերպման ռազմավարության շրջանակում Հայաստանում առաջին անգամ ներդրվել է անհատականացված փորձառությամբ Converse Mobile-ը, որը հնարավորություն է տալիս ամբողջությամբ թվային հոսքագծով դառնալ Բանկի հաճախորդ, ակտիվացնել եւ կառավարել C360 ծառայությունների փաթեթները, դիմել վարկավորման, կատարել խնայողություններ, վճարումներ եւ փոխանցումներ, կցել թվային դրամապանակներ եւ կատարել QR վճարումներ, ինչպես նաեւ կառավարել հավելվածի կառուցվածքն ու օգտվել տարբերակված գունային ռեժիմից՝ ըստ C360 փաթեթի:

Միաժամանակ, արձանագրվել է, որ այս ամենն իրականացվում է անխափան աշխատանքով եւ որակյալ փորձառությամբ, որի գնահատականը տրվում է հենց հավելվածի օգտատերերի կողմից՝ CES եւ CSAT ցուցանիշների հիման վրա: Հավելվածի զարգացման եւ նոր լուծումներով հարստացման ճանապարհին Բանկը մշտապես կարեւորել է անվտանգության բարձր մակարդակի պահպանումն ու զարգացումը. Կոնվերս Բանկն առաջինն է Հայաստանում ներդրել Trusted Device գործիքը, ինչպես նաեւ վարկավորման գործընթացում կենսաչափական նույնականացման մեխանիզմը՝ զեղծարարություններից խուսափելու նպատակով:

Թվային հարթակների զարգացմանը զուգընթաց Բանկը կարեւորում է նաեւ խորհրդատվության եւ աջակցության կենտրոնների զարգացումը՝ որպես ժամանակակից բանկինգի անբաժանելի մաս: 2025 թվականի հուլիսին գործարկվել է Հայաստանում առաջին Converse Next մասնաճյուղի կոնցեպտը, որտեղ ֆինանսական խորհրդատվությունն ու ծառայությունների մատուցման թվային փորձառությունը նոր սիներգիա են ստեղծում թվային հարթակների եւ ֆիզիկական մասնաճյուղերի միջեւ՝ մասնաճյուղը դիրքավորելով որպես ոչ ավանդական ֆինանսական խորհրդատվության եւ թվային բանկինգում մենթորության կենտրոն: Բանկն ունի նաեւ 24/7 հասանելիությամբ աշխատող Կոնտակտային կենտրոն, որը հանդիսանում է նաեւ թվային գործիքների կիրառման հետ կապված հարցերի եւ խնդիրների արագ կարգավորման աջակցության կենտրոն:

Բանկում ներդրվել է նաեւ վարկավորման թվայնացված նոր հոսքագիծ, ինչի շնորհիվ զգալիորեն կրճատվել է վարկավորման համար պահանջվող ժամանակը: Հաճախորդների հետ փոխհարաբերությունները, այդ թվում՝ պայմանագրային գործընթացները, հիմնականում իրականացվում են թվային ձեւաչափով, իսկ Converse Next-ում առհասարակ չի կիրառվում թղթային որեւէ գործընթաց:

Բանկում նշում են, որ թվային ծառայությունների եւ դրանց մատուցման ուղիների զարգացման, ընդլայնման ու նորարարական լուծումների ներդրման աշխատանքները լինելու են շարունակական:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ»

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն պարզաբանում է հրապարակել՝ կապված սոցիալական հարթակներում «Վեոլիա Ջրի» կողմից մատակարարվող խմելու ջրի որակի վերաբերյալ գնահատականների մասին:

«Վերջին օրերին հանրային տիրույթում եւ սոցիալական հարթակներում տարածվում են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից մատակարարվող խմելու ջրի որակի վերաբերյալ տարբեր գնահատականներ եւ պնդումներ, որոնք հիմնված չեն մասնագիտական եզրակացությունների կամ պաշտոնական տվյալների վրա:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն հայտարարում է, որ սպառողներին մատակարարվող խմելու ջուրը գտնվում է անընդհատ եւ շուրջօրյա վերահսկողության ներքո: Ջրի որակը պարբերաբար ստուգվում է լաբորատոր հետազոտությունների միջոցով, իսկ ստացված արդյունքները մշտապես գնահատվում են գործող նորմատիվ պահանջներին համապատասխան:

Միաժամանակ հարկ է ընդգծել, որ խմելու ջրի որակի նկատմամբ վերահսկողություն իրականացնում է ոչ միայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն: Օրենքով սահմանված կարգով, այն մշտապես վերահսկվում է նաեւ պետական իրավասու մարմինների կողմից, որոնք իրականացնում են անկախ վերահսկողություն եւ արձանագրում են ցանկացած խախտում: Հետեւաբար, եթե խմելու ջրի որակի հետ կապված առկա լինեին առողջության համար վտանգ ներկայացնող շեղումներ կամ գործող նորմերի խախտումներ, դրանք անպայման կարձանագրվեին պետական վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից եւ կդառնային հանրային իրազեկման առարկա:

Հարկ ենք համարում նաեւ ընդգծել, որ հանրային քննարկումների առարկա դարձած ջրի կոշտությունը խմելու ջրի անվտանգության չափանիշ չէ եւ չի համարվում առողջության համար վտանգ ներկայացնող գործոն: Ջրի կոշտությունը պայմանավորված է միայն տվյալ ջրաղբյուրի երկրաբանական առանձնահատկություններով: Իսկ քանի որ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն տարբեր տարածաշրջաններում իր սպառողների ջրամատակարարումն իրականացնում է տարբեր ջրաղբյուրներից, հետեւաբար ջրի առանձին ֆիզիկաքիմիական ցուցանիշները, այդ թվում՝ կոշտությունը, կարող են տարբեր լինել՝ պայմանավորված բացառապես աղբյուրների բնական առանձնահատկություններով: Հատկանշական է նաեւ, որ 2027 թվականից ուժի մեջ մտնող նոր կարգավորումները եւս արտացոլում են ջրի կոշտության նկատմամբ կիրառվող մոտեցումների փոփոխությունը՝ այն չդիտարկելով որպես հանրային առողջության ռիսկ բնութագրող ցուցանիշ (որոշումը՝ https://www.arlis.am/hy/acts/185734):

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն պատասխանատվությամբ հայտարարում է, որ սպառողներին մատակարարվող խմելու ջուրը գտնվում է շարունակական վերահսկողության ներքո եւ համապատասխանում է գործող սանիտարահիգիենիկ պահանջներին:

Միաժամանակ կոչ ենք անում լրատվամիջոցներին, սոցիալական հարթակների օգտատերերին եւ բոլոր շահագրգիռ կողմերին զերծ մնալ ընկերության գործունեության վերաբերյալ չստուգված, մասնագիտական եզրակացություններով չհիմնավորված եւ ընկերության նկատմամբ ուղղորդված բնույթ կրող տեղեկությունների տարածումից: Հանրային առողջությանը վերաբերող ցանկացած տեղեկատվություն պետք է հիմնված լինի բացառապես փաստերի, լաբորատոր հետազոտությունների արդյունքների եւ իրավասու մարմինների պաշտոնական գնահատականների վրա»:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ԱՄԵՆԱՄԵԾ ՆԵՐՈՒԺԸ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆՆ Է

Ֆինանսաբանկային համակարգն այսօր գործում է ամեն օր այլակերպվող տնտեսական միջավայրում. տեխնոլոգիական զարգացում, հաճախորդների փոփոխվող վարքագիծ, շուկայի նոր պահանջներ եւ անկայուն աշխարհաքաղաքական իրադրություն: Ի՞նչ ռազմավարությամբ է առաջնորդվում Ֆասթ Բանկն ու ինչպե՞ս է արձագանքում նոր մարտահրավերներին. այս մասին այսօր կզրուցենք Ֆասթ Բանկի ֆինանսական տնօրեն, տնօրինության անդամ Գոհար Հարությունյանի հետ:

-Տիկին Հարությունյան, ողջույն, Ֆասթ Բանկը վերջին տարիներին արագ աճ է գրանցել: Որո՞նք են այդ աճի հիմնական գործոնները:

-Իրականում Բանկը մեկ լավ գաղափարով կամ որոշմամբ չի աճում, դրանք հարյուրավոր փոքր, բայց ճիշտ որոշումների արդյունք են, որ մենք ամենօրյա կտրվածքով կայացնում ենք: Միայն ճիշտ ռազմավարությունը բավարար չէ, պետք է նաեւ ճիշտ մտածողություն, թիմ, մշակույթ, տեխնոլոգիաներ: Իմ կարծիքով՝ մեր ամենամեծ ուժը դա մեր մտածողության մեջ է, ոչ թե սովորական մտածողություն, այլ տեխնոլոգիական մտածողություն: Ես երկար ժամանակ աշխատել եմ ավանդական բանկերում եւ տեսել եմ, որ ծրագրավորողները եւ բիզնեսի մարդիկ տարբեր ֆրոնտներում աշխատող մարդիկ են, իսկ մեր բանկում իրենք միասին են որոշում կայացնում, միասին են աշխատում: Երբեմն նույնիսկ կատակում եմ, թե ես ավելի շատ ինձ IT (SS) ընկերությունում եմ պատկերացնում:

Ամենաուժեղ մեր կետը դա մեր սեփական ծրագրային լուծումն է, հենց ինքներս ենք զարգացնում մեր քոր բենքինգը (core banking) եւ դա մեզ ճկունություն է տալիս արագության առումով, մենք արտաքին ծրագրավորման ընկերություններից կախված չենք: Անընդհատ կարողանում ենք զարգացնել մեր լուծումները եւ դա մեր մրցակցային մեծ առավելություններից է:

Ֆասթ Բանկում երեւի ամենամեծ բացահայտումը դա երիտասարդ մտածողությունն էր, մանավանդ սքրամը (scrum)՝ փոքր քայլերով առաջ գնալ, արագ փորձարկել, չվախենալ եթե ինչ -որ թերություններ կան, կատարյալ չեն, ու անընդհատ կատարելագործվել: Դա է մեր մտածողությունը, ու Ֆասթ Բանկի համար դա շատ կարեւոր գործոններից մեկն է: Եթե սպասես, որ կատարյալ լուծում կգտնես, հաստատ հետ կմնաս շուկայից:

2025 թվականը մեզ համար շատ կարեւոր, բեկումնային տարի էր, մեր ակտիվներն աճեցին ավելի քան 50%-ով ու հատել են արդեն 1 միլիարդ դոլարը: Դա իհարկե հրաշալի արդյունք է, բայց նաեւ պատասխանատվություն է: Ինչքան մեծանում է մեր բանկը, այնքան մարդկանց վստահությունն է ավելանում, այնքան մեր պատասխանատվությունն է մեծանում, եւ պետք է պատասխանատվությունն արդարացնենք: Դա մենք դիտարկում ենք որպես ավելի շատ պարտավորություն, ոչ թե ձեռքբերում: Հենց սա էր մեր «կախարդական» բանաձեւը, որ սկզբում ասացի, դա մեր մտածողությունն է, առողջ աճի նկատմամբ մեր մոտեցումները, մեկ թիմում ծրագրավորողների հետ աշխատելու մեր մշակույթը, տեխնոլոգիաների, AI (ԱԲ)-ի հետ աշխատելու մեր ունակությունները եւ սեփական տեխնոլոգիական ճկունությունը, ինչպես նաեւ թիմն ու մեր հաճախորդների մեծ վստահությունը, որ ավելի ու ավելի մեծանում է:

-Տիկին Հարությունյան, ֆինանսական տնօրեն լինելուց զատ, Դուք հանդես եք գալիս որպես ֆինանսական ուղղվածություն ունեցող ընկերությունների Group CFO: Ի՞նչ է փոխվել այդ մոդելի ներդրմամբ:

-Եթե անկեղծ լինեմ, ես դա նոր դեր չեմ դիտարկում: Ես աշխատում եմ ֆինանսական ընկերությունների խմբում, որոնք գործունեություն են ծավալում ոչ միայն Հայաստանում, այլեւ Միացյալ Թագավորությունում, Մալթայում, Հնդկաստանում, Շուտով՝ Ռումինիայում: Իհարկե յուրաքանչյուր երկիր ունի իր բիզնես մշակույթը, իր հարկային պահանջները, բայց ֆինանսական կառավարման սկզբունքները, կարծում ենք, սահմաններ չեն ճանաչում: Դա պատասխանատվությունն է, հաշվետվողականությունն է, ռիսկերի հանդեպ առողջ վերաբերմունքն է, որը չի տարբերվում երկրից կախված: Դրանք մեր այն արժեքներն են, որոնք մենք փորձում ենք բոլոր ընկերություններում նույն կերպ դնել, ու երբ աշխատում ես տարբեր երկրների թիմերի հետ, տեսնում ես, որ նույն խնդիրը տարբեր երկրներում տարբեր լուծումներ են գտնում: Եվ հաճախ հենց այդ հինգ երկրների համեմատությունն էլ մեզ նոր լուծման է տանում: Մենք ոչ թե կենտրոնացման ենք գնում, այլ յուրաքանչյուր ընկերության ինքնությունը, այդ երկրի առանձնահատկությունները պահպանելով, տանում ենք նույն խմբի, նույն պահանջների հովանու ներքո:

-Տիկին Հարությունյան, կարո՞ղ եք ներկայացնել Ձեր հոլդինգի ֆինանսական hub-ի գաղափարը, դրա նշանակությունն ու Բանկի դերը:

-Գաղափարը ծնվեց նրանից, որ սկսեցինք մտածել, թե ինչու պետք է պրոֆեսիոնալ մասնագետը կրկնվող գործառույթների վրա մեծ ժամանակ ծախսի: Եվ դա միայն ֆինանսական գործառույթների մասին չէ, ամբողջ խմբի աջակցող ստորաբաժանումների մասին է՝ ֆինանսներին, HR-ին, IT-ին, գնումներին եւ մյուս աջակցող գործառույթներին է վերաբերում: Մեր նպատակն այդ գործառույթները ոչ միայն մեկ կետում կենտրոնացնելն էր, այլեւ ունակությունները մեկ կետում հավաքագրելն էր: Օրինակ եթե Հայաստանի թիմն ստեղծել է բյուջետավորման արդյունավետ համակարգ, կամ օրինակ եթե Մալթայի մեր թիմն ունի ավելի հաջող ծրագրային լուծում, մենք չենք ուզում, որ մյուս երկրներում գործող ընկերությունները զրոյից սկսեն այդ նույն պրոցեսը: Մենք ուզում ենք, որ արագ դա հասանելի դառնա ամբողջ խմբի համար: Եվ հենց դա է մեր հաբի (hub), կենտրոնի ձեւավորման հիմնական տեսլականը, որ հաբը դառնա համագործակցության կենտրոն:

-Ֆասթ Բանկի անունը շատ խոսուն է. կասե՞ք ինչպես է արտահայտվում «fast»-ը բանկի աշխատանքում, ինչպես նաեւ մտածողության մեջ:

-«Fast»-ը մեզ համար միայն արագություն չէ, «fast»-ը մեզ համար մտածելակերպ է, ճիշտ եւ ժամանակին որոշումներ կայացնելու ունակությունն է: Ֆինանսիստները մի խնդիր ունեն՝ կամ չափազանց երկար ես մտածում ու կորցնում ես պահը, կամ էլ հապճեպ որոշում ես կայացնում ու կորցնում ես պահը: Մեզ համար «fast»-ը հենց այդ հավասարակշռությունը պահպանելն է՝ արագ հավաքել փաստերը, արագ քննարկել, արագ որոշումներ կայացնել հստակ: Կարծում եմ՝ ժամանակակից բանկում արագությունը րոպեներով կամ վարկի տրամադրման ժամերով չի չափվում, այլ չափվում է, թե ինչքան արագ կարող ես սովորել, ինչքան արագ կարող ես փոփոխվել եւ ինչքան արագ կարող ես հարմարվել իրականությանը: Մեր համար արագությունը երբեք չի նշանակել հապճեպ լինել, այլ կարեւոր է ունենալ այնպիսի թիմ, այնպիսի որոշումների կայացման մշակույթ, որ կարողանանք արագ արձագանքել առանց վստահությունը կամ որակը կորցնելու: Մեր նպատակն արագ արժեքներ ստեղծելն է, եթե դա մենք կարողանում ենք անել պատասխանատու ձեւով, ուրեմն «fast»-ը մեր միայն անունը չի, այլ մեր մշակույթն է, մեր մտածելակերպը:

-Տիկին Հարությունյան, իսկ կանանց դերակատարությունը Բանկում ինչպե՞ս եք գնահատում:

-Եթե անկեղծ լինեմ՝ տարիների ընթացքում իմ վերաբերմունքը շատ փոխվել է այդ հարցում: Երբ մի քանի տարի առաջ դուրս էի գալիս նախորդ աշխատավայրից, ինձ հարցրեցին, թե ինչի համար եմ ամենաշատը փոշմանում: Ես պատասխանեցի, որ միայն փոշմանում եմ, որ իմ ղեկավարության տարիներին տղամարդկանց եւ կանանց հանդեպ պահանջներս նույնն են եղել, երբեք չի տարբերակվել: Ու ես իրոք այն ժամանակ մտածում էի, որ պրոֆեսիոնալիզմը սեռ չի ճանաչում, ու վերաբերմունքն էլ պետք է նույնը լինի բնականաբար: Բայց այսօր մի քիչ փոխվել եմ: Իհարկե կանանց պրոֆեսիոնալիզմի մասին չի խոսքը, ես չեմ թերագնահատում, ընդհակառակը:

Կանայք հաճախ միաժամանակ մի քանի պատասխանատվություն ունեն՝ մասնագիտական, ընտանեկան, եւ մեծ ուժ է պահանջվում, որ բոլորը հավասարակշռեն, եւ եթե Ֆասթ Բանկի մասին ասեմ, ապա մենք հավասար հնարավորությունների հարց չենք դիտարկում: Արդեն ունենք AFISAR-ի կողմից տրված SDG-ի ռեյտինգավորման B+ վարկանիշը, որտեղ կարեւոր դեր էր տրվում խտրականությանը, կանանց իրավունքներին: Բայց անկեղծ ասեմ՝ այդ վարկանիշավորումը կամ թվերը չեն որ կարեւոր են, կարեւորը դա ձեւական չի մեզ մոտ, դա մշակույթի էլեմենտ է: Ու ես՝ որպես կին ղեկավար, շատ ուզում եմ, որ երիտասարդ աղջիկները, կանայք տեսնեն, որ մասնագիտական աճը հնարավոր է ընտանիքի հետ համատեղել: Մեր բանկում ամենամեծ պատասխանատվություններից մեկն էլ հենց սա էր, որ ստեղծենք այն միջավայրը, որ ոչ մի կին ստիպված չլինի մասնագիտական աճի եւ ընտանիքի մեջ դնել կշեռք: Պետք է հնարավորություն ունենալ համատեղել:

-Ամփոփելով եւս մեկ հարց տամ, եթե 25-ամյա Գոհարին հնարավորություն ունենայիք տալ մեկ խորհուրդ, որը հետագայում նրան կփոխեր որպես ղեկավար, ապա ի՞նչ խորհուրդ կտայիք:

-25-ամյա Գոհարը մտածում էր, որ լավագույն ղեկավարն այն մարդն է, որն ամենալավ որոշումներն է կայացնում, հիմա ես կասեմ՝ մի՛ մտածիր, որ լավ ղեկավար լինելու համար պետք է ճիշտ պատասխաններ ունենալ, ամեն հարցի մեջ դու որոշում կայացնես: Իհարկե կարեւոր է որոշ ճիշտ որոշումներ կայացնելը հենց ղեկավարի համար, բայց ամենակարեւորը դա հնարավորություն տալն է, որ քո ենթակաները հնարավորություն ունենան ճիշտ որոշումներ կայացնեն եւ իրենք էլ մոտիվացված լինեն այդ որոշումների արդյունքում:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ՄԱՐԶԱԿԱՆ

ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ

Իսպանիայի հավաքականի ավագ Ռոդրին ճանաչվել է 2026 թվականի Աշխարհի առաջնության լավագույն ֆուտբոլիստ:

Իսպանիան իր պատմության մեջ երկրորդ անգամ դարձավ Աշխարհի առաջնության չեմպիոն՝ 2026 թվականի եզրափակչում հաղթելով Արգենտինային (1-0, լրացուցիչ ժամանակ):

Հանդիպումից հետո մրցանակաբաշխության արարողության ժամանակ Ռոդրին արժանացավ «Ոսկե գնդակին»՝ որպես ՖԻՖԱ-ի Աշխարհի առաջնության լավագույն ֆուտբոլիստ: Արծաթե գնդակը ստացավ Արգենտինայի հավաքականի հարձակվող Լիոնել Մեսսին, իսկ բրոնզե գնդակը՝ Ֆրանսիայի հավաքականի հարձակվող Կիլիան Մբապեն:

Իսպանիայի հավաքականի դարպասապահ Ունայ Սիմոնը ճանաչվել է 2026 թվականի Աշխարհի առաջնության լավագույն դարպասապահ: Ունայ Սիմոնը մրցաշարի ընթացքում անցկացրած ութ հանդիպումներում բաց է թողել ընդամենը մեկ գոլ:

Աշխարհի առաջնության լավագույն երիտասարդ ֆուտբոլիստի մրցանակը եւս հանձնվեց արարողության ժամանակ: Մրցանակը շնորհվեց Իսպանիայի հավաքականի կենտրոնական պաշտպան Պաու Կուբարսիին, գրում է armsport-ը:

ՀԱՎԵՐԺ ԿՄԻՐԵՆ

Արգենտինայի ազգային հավաքականն իր սոցիալական ցանցերում հրապարակում է կատարել՝ նվիրված թիմի ավագ Լիոնել Մեսսիին՝ աշխարհի 2026 թվականի առաջնության եզրափակիչում Իսպանիայի ընտրանուց կրած պարտությունից (0-1) հետո:

39-ամյա ֆուտբոլիստը պարգեւատրման արարողության ժամանակ չէր կարողացել զսպել արցունքները, երբ տրիբունաներում գտնվող երկրպագուները սկսել են վանկարկել նրա անունը:

«Քո արցունքները մեր արցունքներն են, ավա՛գ: Դու մեզ պարգեւել ես կյանքի ամենավառ ակնթարթները: Շնորհակալ ենք նվիրվածության, խաղի եւ մինչեւ վերջին վայրկյանը պայքարելու համար: Մենք քեզ հավերժ կսիրենք, Լեո՛»,- ասված է Արգենտինայի հավաքականի պաշտոնական էջի տարածած հաղորդագրության մեջ, փոխանցում է armsport-ը:

Հիշեցնենք, որ Արգենտինայի հավաքականը չկարողացավ պաշտպանել աշխարհի չեմպիոնի կոչումն ու բավարարվեց արծաթե մեդալներով: Իսպանիան նվաճեց աշխարհի առաջնության երկրորդ տիտղոսն իր պատմության մեջ: Թիմի առաջին եւ միակ հաղթանակը համաշխարհային ստուգատեսում գրանցվել էր 2010 թվականին:

● *Խամաճիկների պետական թատրոնում հուլիսի 25-ին՝ ժամը 12:30-ին, կկայանա «Հենզելն ու Գրետելը » տիկնիկային ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞րն է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի դերը կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործընթացում:

Վահան Աբրահամյան, 57 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի հիման վրա 2024 թվականին Հանձնաժողովը մշակել եւ Արդարադատության նախարարություն է ներկայացրել ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է Հանձնաժողովին վերապահել հանրային իշխանության մարմիններում, պետական եւ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություններում, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում, 50 եւ ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության եւ համայնքի մասնակցությամբ առեւտրային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման եւ կառավարման միասնականության ապահովման, իրավասու մարմիններ առաջարկությունների ներկայացման գործառույթները: Բացի այդ, նախագծի ընդունմամբ Հանձնաժողովին կվերապահվի նաեւ կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակման եւ հաստատման, ինչպես նաեւ մասնագիտական խորհրդատվության եւ մեթոդական աջակցության տրամադրման գործառույթները:

Այս փուլում Հանձնաժողովը կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության նախագծի հիման վրա իրականացնում է կոռուպցիոն ռիսկերի փորձնական գնահատումներ՝նախագիծը լավարկելու եւ ՀՀ առանձնահատկություններին համապատասխանեցնելու նպատակով:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Եթե իրավաբանական անձ հաճախորդի հաշվից 20 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումար է դեբետագրվել մի քանի ստացողների հաշիվներին 20 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարներով փոխանցելու նպատակով, արդյո՞ք անհրաժեշտ է Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացնել պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվություն:

Գալուստ Սարգսյան, 48 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն դեպքում, երբ իրավաբանական անձ հաճախորդի հաշվից դեբետագրվում է 20 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումար, որը փոխանցվում է մի քանի ստացողների՝ աշխատավարձի, կոմունալ ծառայությունների կամ նմանատիպ այլ նպատակներով վճարումներ կատարելու համար, եւ յուրաքանչյուր առանձին ստացողին փոխանցվող գումարը չի գերազանցում 20 միլիոն ՀՀ դրամը, ապա Ֆինանսական դիտարկումների կենտրոն պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվություն չի ներկայացվում: Վերոնշյալը չի վերաբերում այն դեպքերին, երբ իրավաբանական անձի հաշվից դեբետագրվում է 20 միլիոն ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող գումար՝ մեկից ավելի գործարքներով այլ իրավաբանական անձանց (այդ թվում օտարերկրյա պետություններում գտնվող) փոխանցումներ կատարելու նպատակով:

ՀՀ ԿԲ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Ողբերգական դեպք Վայոց ձորի մարզում. փրկարարներն ու հատուկ ջրասուզակը Գողթանիկի ջրվեժում որոնում են 21-ամյա ջրահեղձ եղած տղայի մարմինը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 8 + 13 + 25 + 29
Կոտայքի լեռներ	+ 7 + 12 + 24 + 28
Կոտայքի նախալեռներ	+ 15 + 18 + 31 + 34
Գեղարքունիք	+ 9 + 14 + 22 + 27
Լոռի	+ 10 + 14 + 24 + 28
Տավուշ	+ 10 + 14 + 24 + 28
Արագածոտնի լեռներ	+ 7 + 11 + 23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+ 14 + 19 + 31 + 35

Արարատ	+ 16 + 19 + 33 + 36
Արմավիր	+ 17 + 21 + 35 + 37
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 13 + 24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+ 18 + 22 + 35 + 37
Սյունիքի լեռներ	+ 9 + 12 + 18 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 16 + 23 + 26
Սյունիքի հովիտներ	+ 20 + 24 + 30 + 33
Երեւան	+ 19 + 21 + 34 + 36

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.07.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*